ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Լիբանանի Հանրապետության երիտասարդության և սպորտի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով երկու երկրների միջև բարեկամական կապերի վրա,

հավատալով, որ ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդական քաղաքականության ոլորտներում հարաբերությունների զարգացումը խթանիչ ուժ կհանդիսանա երկու երկրների միջև հարաբերությունների խորացման համար,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կհամագործակցեն սպորտի և երիտասարդական քաղաքականության բնագավառներում՝ սույն Համաձայնագրին, իրենց ազգային օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Կողմերը կաջակցեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության ամրապնդմանը հետևյալ կերպով.

1. Նպաստել սպորտային թիմերի փոխանակմանը ակումբների և միությունների մակարդակով՝ նպատակ ունենալով կազմակերպելու

ուսումնամարզական հավաքներ կամ ընկերական մրցումներ և ստեղծելու անմիջական կապեր նմանատիպ և մրցող կազմակերպությունների միջև:

2. Դյուրին դարձնել սպորտի բոլոր ճյուղերի մարզիկների և մարզիչների ձեռքբերմանն ուղղված՝ ակումբների միջև պայմանագրերի կնքումը:

3. Կազմակերպել մարզիչների ուսուցողական սեմինարներ՝ նպաստելով փորձի փոխանակմանը, փոխայցելություններ մարզական կենտրոններ և մարզական կազմակերպություններ:

4. Մարզական ֆեդերացիաների կողմից կազմակերպել մրցավարական սեմինարներ, ինչպես նաև սպորտային խաղեր:

5. Համագործակցել հաշմանդամային սպորտի ոլորտում:

ՀՈԴՎԱԾ 3

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Երիտասարդական քաղաքականության ոլորտում համագործակցությանն աջակցելու նպատակով Կողմերը կկազմակերպեն.

1. Իրենց պետությունների երիտասարդական քաղաքականության ոլորտը համակարգող ղեկավարների և երիտասարդական ոլորտի փորձագետների փոխայցելություններ:

2. Երիտասարդական պատվիրակությունների փոխայցելություններ՝ երիտասարդների միջև փոխըմբռնման խորացման և բարեկամական հարաբերությունների ամրապնդման նպատակով:

3. Իրենց պետությունների երիտասարդական ակումբների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության իրականացում և ամրապնդում:

4. Երիտասարդական զբոսաշրջության հիմնում և ներկայացում՝ որպես մշակույթների փոխադարձ ճանաչման, խաղաղության և բարեկամության ամրապնդման միջոց:

5. Երկու երկրների կողմից փոխադարձ բարեկամական երիտասարդական միջոցառումների կազմակերպում:

6. Կողմերի միջև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ ոլորտի համակարգում և համագործակցության իրականացում:

ՀՈԴՎԱԾ 4

ԾԱԽՍԵՐԸ

Կողմերը կկազմակերպեն իրենց պետությունների երիտասարդական և մարզական պատվիրակությունների և պաշտոնյաների փոխայցելություններ: Ճանապարհածախսը կհոգա Ուղարկող կողմը:

Ընդունող կողմը կհոգա կացության ծախսերը՝ ներառյալ սնունդը, բժշկական սպասարկումը և երկրի ներսում փոխադրամիջոցների ապահովումը:

ՀՈԴՎԱԾ 5

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի դրույթների կատարումն ապահովելու համար Կողմերը կհիմնեն համատեղ հանձնաժողով, որի անդամները կհանդիպեն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ հաջորդաբար Երևանում և Բեյրութում: Համատեղ հանձնաժողովը կմշակի աշխատանքային ծրագրերը, կհետևի դրանց իրականացմանը և կստեղծի համագործակցության այլ ուղղություններ:

ՀՈԴՎԱԾ 6

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Կողմերից ցանկացածի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրով նախատեսված ընթացակարգերին համապատասխան և կհանդիսանան դրա անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 7

ՎԵՃԵՐԸ

Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման ընթացքում Կողմերի միջև առաջացող ցանկացած վեճ կլուծվի բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին մի Կողմի վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմի ստանալու օրվանից: Այն կգործի հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի համանման ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին դրա վավերության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ: Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի այն ծրագրերի և նախագծերի իրականացման վրա, որոնց շուրջ համաձայնությունը ձեռք է բերվել նախքան դադարեցման մտադրության մասին ծանուցումը:

Կատարված է Երևան քաղաքում 2011 թվականի դեկտեմբերի 9-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**